I-155

ARMENIA, Journal en Langue Arménienne, Fondé à MARSEILLE en 1885

ԱՐՄԷՆԻԱ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ (կանխիկ վճարելի)

Տարեկան բաժնորդագին	30 ֆրանգ
Վեցամսեայ »	15 ֆրանգ
Եռամսեայ »	7 ½ ֆրանգ

Ամէն գրութիւն կամ դրամ ղրկել տնօրէն-խմբագրին այս հասցէով
M. PORTOUKALIAN
Directeur du journal *Armenia*
MARSEILLE (France)

ԼԵ ՏԱՐԻ
Թիւ
1921 ՕԳՈՍՏՈՍ 3 Դշ.
(Հ.Տ. 1921 Յուլիս 21)

ԶԳԱՑՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը եթէ հարկ համարի, համառօտելով եւ կամ ամսամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։ Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները։

Ծանուցումներ կընդունուին հայերէն եւ ֆրանսերէն լեզուով։

Ծանուցման 1 միջակ գիրը 2 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 4 սանդիմ։

Les annonces en français et en arménien sont reçues au bureau de la Rédaction : Place Alexandre-Labadié, 17

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ "ԱՐՄԷՆԻԱ"Ի ԼԵ ՏԱՐԵՇՐՋԱՆԻՆ

(1921 ՕԳՈՍՏՈՍ — 1922 ՅՈՒԼԻՍ)

Ամբողջ 37րդ տարեշրջանի (1921 օգոստոս-1922 յուլիս) բաժնորդագինն է 30 ֆրանգ ամէն տեղի համար։

Կարելի է նոյն հաշուի համեմատ բաժնորդագրուիլ նաեւ 6 ամսի եւ 3 ամսի համար։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

		ֆր. սնդմ.
Ա.	Հայ դիւցազնուհի մը Բ. տպագր.	,40
Բ. — Ը.	(Սպառած)	
Թ.	«Արմէնիա»ի յուշարար (Ա. տարի)	1,40
Ժ.	Վրէժ	,20
ԺԱ.	Թոմաս Բոցարիս	,20
ԺԲ.	Նմոյշներ Մ. Փորթուգալեանի գրած ոտանաւորներէն	,15
Ժ.	Մի պուլկար հայրենասէր (Պուլկարիոյ Ցեղափոխութեան ծագմանպատմութիւնը)	1,40
ԺԴ.	Մի՛ գաղթէք	,20

Մարսէյլէն դուրս ղրկելու փոստի ծախքը կը վճարուի հրատարակողէն։

ՀԱՅ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ

Բ Տպագրութիւն

Անուանի գրագէտ Ստեփան Ոսկանի գրած այս փոքրիկ վէպը որ հիմնուած է իրական դէպքի մը վրայ եւ հեղինակին արտօնութեամբ առաջին անգամ առանձին տետրակով հրատարակուած էր Մարսէյլի մէջ Մ. Փորթուգալեանի նոր բացած հայերէն տպարանէն, վաղուց արդէն սպառած լինելով, այս անգամ Բ. տպագրութեամբ կրկին լոյս տեսած է։

ԳԻՆՆ Է 40 ՍԱՆԴԻՄ ԱՄԷՆ ՏԵՂ

Մեծ քանակութեամբ գնողին զեղչ կը լինի :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Շնորհակալիք. — Էջմիածնանպաստ հանգանակութեան Մարսէյլի Յանձնախումբէն. — Ա. ցանկ էջմիածնանպաստ հանգանակութեան մասնակցողների. — Անղեկ Նաւը. — Հայաստան. — Վեհ. կաթողիկոսի ճանբորդութիւնը. — Կիլիկիա. — Պօղոս Նուպար փաշայի 70ամեակը. — Նամակ Փոքր Ասիայէն (Պրուսա). — Մի քանի ամիս Վիեննայում. — Յունաթիւրք կռիւը. — Բանասիրական (ճառ Մեսրովբայ Յ. Սեթեանց՝ ասացեալ ի հանդիսի « Հարիւրամեայ Յոբելենի » Հայկեան Մարդասիրական Ճեմարանի որ ի Կալկաթա). — Նոր ստացուած հրատարակութիւններ. — Ծանուցումներ։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Արմէնիայի խմբագրութիւնը իր սրտագին շնորհակալութիւն յայտնելով ամէն անոնց որոնք շնորհաւորած են Արմէնիայի իր 37րդ տարին թեւակոխելը, կը յայտնէ միանգամայն որ այդ առթով մեզի ղրկուած յօդուածները չեն հրատարակուիր, մեր սովորութեան մէջ չլինելով այդ։

* * *

ԷՋՄԻԱԾՆԱՆՊԱՍՏ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՐՍԷՅԼԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԷՆ

Մարսէյլ, 30 յլս. 1921

Մարսէյլի Էջմիածնանպաստ Հանգանակիչ Յանձնախումբս՝ երկրորդ անգամ ըլլալով Արմէնիայի միջոցաւ դիմում կընէ ամէն Հայերու, որոնք իր առաջին կոչին խուլ մնացին կամ այս ու այն պատճառաւ թերացան, նաեւ անոնց որոնք խոստացան եւ ցարդ չը կատարեցին, որ փութան իրենց պարտականութեան բաժինը բերել յօգուտ Ս. Էջմիածնի պայծառութեան եւ այսպէս ազատել մեր հինաւուրց փառքն ու պարծանքը խորհրդանշող միակ հաստատութիւնը որ դարերու ընթացքին իր կատարած կրօնաազգայնական անվիճելի դերով մեր ազգային գոյութեան տեսակէտով՝ իրաւամբ արժանի է ամէն Հայու առանձին գուրգուրանքին։ Այս մասին երկու կարծիք չի կարող լինել որուն համար կը յուսանք որ բոլոր յետամնացները եւ չը մասնակցողները ինքնաբերաբար կը դիմեն մեր յարգելի գանձապահ Տիար Տիգրան Միրզայեանցին (Հայաստանի Հանրապետութեան Ներկայացուցիչ, rue Armény, No. 15), ամէն օր կէսօրէ վերջ ժամը 3էն 5 եւ իրենց նուէրները կարձանագրեն։

Շատ հին ժամանակներէ ի վեր է որ Էջմիածինը ընդհանուր ազգային օժանդակութեան դիմում ըրած չէր, ինչպէս այդ կընէր պարսկական եւ օսմանեան բռնակալութեանց շրջաններուն, նուիրակներ կը ղրկէր ամէն երկիրներու հայութեան մօտ եւ անոնց օժանդակութիւնը կը հայցէր։ Նա արդէն սկսած էր ինքիրեն բաւականանալ կամ վանքապատկան կալուածներու եկամուտներով եւ կամ իրեն անմիջական շրջապատը գտնուող ժողովուրդի նուէրներով եւ արտաքին օժանդակութեան անհրաժեշտ կարօտութիւն չզգալ. մինչ այժմ բազմաթիւ պատերազմներու հետեւանքով ամէն ինչ տակն ու վրայ եղած, վանքի տնտեսութիւնը քանդուած, ժողովուրդը սոված ամէն տեղ, ո՞ւր գտնել իրենց ճարահատ գլուխները։ Ահա ինչո՞ւ համար մեր ամենուս Հայրը Սրբազան Կաթողիկոսը արտասահմանի իր զաւակներու պարտականութեան կոչ եւ դիմում ըրած է. ուստի պէտք չէ որ այդ ծերունի Հայրիկը յուսախաբ մնայ։ Թո՛ղ ամէն Հայ ճանչնայ իր պարտքն ու պարտականութիւնը եւ կատարէ զայն սիրով, յօժարութեամբ եւ առատութեամբ։

Հա՞րկ է յիշեցնել որ Էջմիածինը կարօտացաւ գլխաւորապէս անոր համար որ լայն բացաւ իր դռները Թրքահայ գաղթականութեան առջեւ, անոնց տեղ տուաւ, պատսպարան տուաւ եւ բաժնեց իր հացը անոնց հետ. ո՞վ գիտէ թէ ձեր ազգականներէն կամ պարագաներէ մին այդ հացէն բաժին չստացաւ որ այժմ ձեզ կրնայ երախտագիտօրէն հատուցանել։

Հայե՛ր, կատարեցէ՛ք ձեր պարտքը հանդէպ Մայր Էջմիածնի։

Ահաւասիկ Ա. ցանկը սոյն հանգանակութեան արդէն մասնակցածներուն։

Ատենապետ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Ատենադպիր
Վ. ՂԱԶԱՐԵԱՆ

—

Ա. ՑԱՆԿ ԷՋՄԻԱԾՆԱՆՊԱՍՏ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՂՆԵՐԻ

		Ֆրանգ
1	Միրզայեանց ընտանիք	1000
2	Գ. Հայրումեանց	1000
3	Տիկին Վարդուհի եւ Տիար Արման Թիւրապեան	600
4	Ղ. Չպուքեան	300
5	Յակոբ Սելեան	300
6	Յ. Գալուստեան	200
7	Գ. Շահյամեան	200
8	Կարապետ Տէր Պօղոսեան	200
9	Լուտֆիկ Փանոսեան	200
10	Հաճի Նիկողոս Քիւրքճեան	200
11	Եղբարք Սողոմոնեան	150
12	Մ. Գայթանճեան	100
13	Ս. Էօքսիւզեան	100
14	Արամ Թիւրապեան	100
15	Յակոբ Կարապետեան	100
16	Սահակ Կէմալմազեան	100
17	Վ. Ղազարեան	100
18	Տքթ. Մելքոնեան	100
19	Յ. Գալթայեան	100
20	Եսայի Պաղտասարեան	100
21	Յ. Տօնիկեան	100
22	Բիւզանդ Մութաֆեան	60
23	Վահան Թապագեան	50
24	ՅԹ. Ժամկոչեան	50
25	Յ. Կէօնճեան	50
26	Պօղոս Մ. Հաճնեան	50
27	Յարութիւն Հայրապետեան	50
28	Սնդրակ Ղազարեան	50
29	Կ. Մութաֆեան	50
30	Սայըրեան Եղբարք	50
31	Կ. Սելեան	50
32	Մ. Փորթուգալեան	50
33	Մ. Քէօսէեան	50
34	Սուքիասեան եւ Օր. Ասարեան	40
35	Արամ Երամեան	30
36	Արշակ Նորոյեան	25
37	Կարապետ Գ. Հայրապետեան	20
38	Պետրոս Սիմիտճիօղլու (Յոյն)	20
39	Անդրանիկ Տէմիրճեան	20
40	Հայկանոյշ Քէշիշեան	20
41	Բուլընդի Չէրքէզեան	15
	Գումար	6150

	Փոխադրուած միւս երեսէն	6150
42	Ճուհար Պօյաճեան	15
43	Սերոբ Գազանճեան	10
44	Ա. Տէր Մինասեան	10
45	Է. Կիւրճեան	5
46	Տուտու Չէրքէզեան	5
47	Ե. Քալայճեան	5
	Գումար	6200
48	Ղազար Ասարեան «Լանսէյէն	50
49	Գաբրիէլ Ջառացեան »	50
50	Սողոմոն Տիւլկէրեան »	20
51	Անառակորդի մը «Արշակաւան»էն	10
	Համագումար Ֆր.	6330

Գանձապահ
Տիգրան Ս. ՄԻՐԶԱՅԵԱՆՑ

ԱՆՂԵԿ ՆԱՒԸ

Ի՞նչ է մեր կացութիւնը այսօր և ի՞նչ կրնայ ներշնչել ան։ Խանդավառ կամ յուսալից ոգեկոչումներով չէ որ պիտի մոռնանք անոր։ Փորձառու ու տոկուն ազգերը, փորձառու և կամքի տէր անհատներու նման կացութեան գիտակցութիւնը կունենան միայն և այդ գիտակցութեամբ զինուած՝ կը քալեն յառաջ, առանց ամէն լաւ կամ վատ պատահարէ շլանալու կամ երկնչելու։

Շատ անգամ փորձած ենք հաւատալ թէ հայ ազգի կրած դարաւոր փորձութիւնները բաւարար էին կեանքի դպրոցէն թրծուած, պատրաստուած դուրս գալով ազգին ճակատագիրը անսասան յառաջ վարելու և զայն հասցնելու ցանկալի հանգրուանի մը։

Այդպէս չէ սակայն իրողութիւնը։

Ունինք բազմաչարչար ու խաչուած ազգային դատ մը, բայց մի՞թէ ունինք անոր տարողութեան, դժուարութեան համապատասխան առաջնորդներ, կամ եթէ կան այդպիսիներ ալ, հայ ժողովուրդը անընդունակ է զանոնք առաջ քաշելու կամ նորեր պատրաստելու։ Ամէն պարագայի մէջ իրականութիւնը չդադրիր դառն ըլլալէ։

Կուզենք ազատութիւն, կուզենք անկախութիւն և ահա մեր ազգային նաւը ճամբայ ինկած է այդ մտատիպարներու ետևէն։

Նաւերնիս ճամբայ ձգած ենք բայց չգիտենք թէ ո՞ր կողմ պէտք է դիմենք, ինչպէ՞ս պէտք է շարժինք, ո՞ւր կը գտնուին այդ թանկագին մտատիպարները։ Փոթորիկները եկան աւելի շփոթեցնելու մեր արդէն շփոթ ընթացքը։ Մէկը աջ կը քաշէ, միւսը ձախ. ամէն ոք իր քմահաճոյքին, իր նախասիրութեան համեմատ բան մը կընէ։

Ուրեմն տեղն է հարցնելու թէ ո՞ւր պիտի երթանք այսպէս։

Պատերազմի սկիզբէն ի վեր, երբ հայ դատը նոր թափ մը կստանար, հայ իրականութիւնը պղտորող մէկ պատրուակն ալ Ռուսահայ և Տաճկահայի խնդիրը եղաւ։ Դժուար է ուրանալ այս ճշմարտութիւնը որ բիրտ ոյժը բացած է այդ արուեստական խրամը մեր միջև. բայց երբ հանգամանքները կուգան ինքնաբերաբար այդ խրամը գոցելու, մի՞թէ խելացութիւն է այլևս զայն վերաբանալը, մանրերով բռնազբօսիկ կերպով զայն պեղելը։

Ի հարկէ, եթէ ռուսական յեղափոխութենէն վերջ ալ Հայաստան չգտնէր իր ինքնուրոյն պետական կեանքը և մնար միշտ հին լուծին տակ, այն ատեն իրաւունք պիտի ունենայինք ուրիշ պիտակով վարելու մեր դատը, որովհետև հայ ժողովուրդը պէտք ունի ինքնիշխան, ազատ ըլլալու, առանց որու իր գոյութիւնը այլևս բան մը չպիտի կրնայ արժել։

Թիւրքական վայրագ լուծին տակ հեծող հայութեան նահատակումէն վերջ, մեր դատի կեդրոնը ինքնին փոխադրուած էր Կովկաս ուր հայութեան մէկ ուրիշ մեծ հատուածը տոգորուած էր նոյն սիրով, նոյն ոգիով։ Հարիւր հազարաւոր գաղթականներ ալ գնացած էին աւելնալ անոնց վրայ և ինքնին կազմել ձուլումը որուն այնքան պէտք ունինք։ Այդ միաձուլուած հայութիւնն էր որ ռուսական յեղափոխութենէն վերջ, թիզ առ թիզ պաշտպանեց իր հողը Թիւրքերու արշաւանքին դէմ և վերջապէս յաջողեցաւ անգին զոհերու արիւնով ձեռք բերել իր անկախութիւնը։

Ուրեմն այն ինչ որ մենք կը հետապնդէինք օտար դռներ բաղխելով, ինքնին կատարուած էր երկրին մէջ։ Այդ իրողութիւնը կը մնայ այսօր ալ իբր փաստ։ Սահմաններու նեղութեան կամ կառավարական փոփոխութեան համար չենք կրնար երկու ճակատ պարզել, երկու պատուիրակութիւն պահել, իրար հակասել և շահելու տեղ կորսնցնել։ Եթէ կուզենք բողոքել մեզ դէմ գործուած անիրաւութիւններուն դէմ, ինչո՞ւ այդ չընենք միացած ձայնով, միացած ուժով. եթէ մեր լիակատար սահմանները կուզենք, ի՞նչ պատճառ դարձնել անջատ գործունէութեան. մի՞թէ մէկին ցաւը միւսինն ալ չէ ու փոխադարձաբար։ Արդեօ՞ք մեր մարմնի աջ թևին հրամայող գլուխը զատ է և ձախինը զատ։

Այն ջանքեր որ կը թափուին այս օրեր երկու պատուիրակութեանց միջև համաձայնութիւն մը գոյացնելու միտքով, պէտք է յանգին բաղդաւոր վերջաւորութեան մը և դառնան տևական։

Ամենքն ալ իրենց թերութիւններ ու առաւելութիւններ ունին. միաձուլումը կրնայ փտումի տեղն ալ բռնել։

Մեր տկար ոյժերը աւելի ևս անզօր չդարձնելու համար պէտք ունինք սրբազան, անկեղծ միութեան. այլապէս մեր անջատ գործունէութիւնները բացասական դեր պիտի խաղան ու մեր ազգային նաւը անղեկ մնալով, պիտի դառնայ խաղալիք մը ուրիշ տարրերու քմահաճոյքին։

Թ. ԵՂԻՇԷ

ՀԱՅԱՍՏԱՆ

Թէհրանէն Լոնտոնի «Դայմըզ»ին տրուած հեռագրի մը համեմատ, Պոլշևիկները տիրեր են Զանգեզուրին։

— Հայաստանի և Վրաստանի խորհրդային կառավարութիւնները դիմեր էին Մոսկուայի կառավարութեան, պահանջելով որ քէմալականները Արդուինի, Արտահանի և Կարսի նահանգներէն ելնեն և քաշուին 1914ի թիւրքական սահմաններէն ներս։

Մոսկուայի կառավարութիւնը իրենց այդ պահանջին ոյժ տալով դիմեր է Էնկիւրիի կառավարութեան որ սակայն չէ ուզած պարպել յիշեալ տեղերը, առարկելով թէ սովիէդական սկզբունքներու համեմատ՝ ժողովուրդները իրենց վարչական ինքնորոշման իրաւունքն ունին և թէ յիշեալ տեղերի բնակիչները որոնք մեծ մասով իսլամ են, կուզեն քէմալական իշխանութեան տակ մնալ։

— «Ճակատամարտ»ի յլս. 20ի թիւէն.

Երէկ մեր խմբագիրներէն մէկը ներկայացաւ Տօքթ. Մէքալըմի, որ հետևեալ տեղեկութիւնները հաղորդեց։—

Մր. Ուէգրի այս շաբթու Պոլիս կը հասնի (1)։ Իրեն կընկերանան նաև 24 անդամներ, որոնք նահանգներու առաջնորդներ են։ Այս այցելութեան նպատակն է աւելի ուժեղացնել Նպաստամատոյցին գործունէութիւնը։ Գիտէք որ այս ընկերութիւնը կազմուած է 1915ին և իր միակ հասոյթն է նուիրատուութիւնները։ Ինչպէս կերևայ, շատ դժուար է ամէն տարի, ամէն անգամ դրամ ուզել. նուիրատուներէն շատեր կը հարցնեն. — ի՞նչ տեսակ երկիրներ են այդ վայրերը, որ վեց տարի է շարունակ կուտանք, ու փոխանակ կարօտութիւնը պակսելու, ալ աւելի կը՛ շեշտուի և սովի ուրուականներ ալ կը ցցուին։ Ամերիկացիներէն շատեր, որոնք նուիրատուութիւններ կընեն, չեն գիտեր թէ ինչպէս է հայը, հայի հետ անգամ խօսած չեն և նոյն իսկ տեսած չեն, չեն գիտեր թէ անոնք սե՞ւ են թէ ճերմակ, բայց միայն գիրքերէ, թերթերէ և ճառերէ լսելով Հայերու մասին, անոնց կօգնեն։ Մր. Ուէգրի և նահանգներու առաջնորդները, պիտի գան իրենց աչքով տեսնելու երկիրը, ուսումնասիրելու պահանջի չափը և հաստատելու թէ իրենց դրամները նպատակին կը գործածուի՞ն։ Ժամանակ մը Պոլիս մնալէ ետք պիտի անցնին Հայաստան. իրենց վերադարձին անշուշտ աւելի կորովով պիտի փարին գործին և նոր թափ մը տան նուիրահաւաքութեան գործին։

«Մր. Եարոյէն երէկ հեռագիր մը ստացայ. կիմացնէ թէ Երևան հասած է և շատ գոհ է կացութենէն, որ մասնաւոր փոփոխութիւն մը չի ներկայացներ. պարենաւորման դժուարութիւնը հետզհետէ կը վերնայ։ Մեր օգնութիւնները արագ կերպով կը հասնին իրենց նպատակին։ Այսօր ևս Կարանթի Թրըսթի միջոցով հայկական փոխառութեան դրամներէն ինծի տրամադրուած է 10,000 ոսկի, զոր կրկնապատկելով նոր մթերքներու պիտի յատկացնենք։

«Մր. Եարօ ալ երբ այստեղ էր, արդէն բաւական պաշար ղրկեցինք և կրցանք կանոնաւոր առաքումի մը մասին կարգադրութիւններ ընել։ Մր. Եարօ ուրիշ գործով մըն ալ եկած էր այստեղ. երբ Ալեքսանդրապոլի մէջ պոլշևիկեան իշխանութիւն յայտարարուեցաւ, մեր բոլոր հաշուական տոմարները պատռեցին. բարեբախտաբար մնացած էին վաւերաթուղթերը որոնց վրայ երեք ամիս աշխատելէ ետք կարելի եղաւ կարգի բերել։

«Հայաստանի տնտեսական կացութիւնը անշուշտ կարելի է աւելի արագ դարմանել եթէ արտասահմանի Հայութիւնն ալ իր ջանքերը անպակաս ընէ և զոհողութեան ոգի ցոյց տայ։»

---

(1) Մր. Ուէգրի իր ընկերներով մէկտեղ Ամերիկայէն հասած է Կ.պոլիս յուլիս 23ի շաբաթ՝ ուրկէ նոյն օր մեկնած է դէպի Պաթում՝ Հայաստան երթալու համար։ Հայ ժողովուրդը ու պաշտօնական մարմինները շքեղ ընդունելութիւն մը ըրած են ծովափին վրայ համախմբուելով։

ԽՄԲ. ԱՐՄ.

ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՃԱՆԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Աթէնքէն հեռագրած են Կ.պոլսի Նէօղոլոսին թէ Հայաստանի խորհրդային կառավարութիւնը յատկապէս պատուիրակ մը ղրկելով Էջմիածին, յայտներ է կաթողիկոսին թէ սովիէդական կառավարութիւնը որոշած է պաշտպանել Ս. Աթոռին շահերը եւ կը փափաքի իմանալ թէ Ս. կաթողիկոսը ի՛նչ առաջարկներ ունի այս նկատմամբ։

Սովիէդական կառավարութեան ներկայացուցիչը խնդրեր է նաեւ վեհ. կաթողիկոսէն որ առ այժմ յետաձգէ իր արտասահման ճամբորդութիւնը որպէսզի ժողովուրդը աւելի սրտապնդուի կաթողիկոսին իրեն մօտ գտնուելովը։

ԿԻԼԻԿԻԱ

Մասնաւոր աղբիւրէ մը կը տեղեկանանք. — Մարաշի բոլոր հայ երիտասարդները զինուորագրուած են. արհեստաւորները արհեստանոցներու մէջ կաշխատին, իսկ միւսները «ամէլէ թապուր»ներու իւրաքանչիւր հոգիի օրական 3 հաց կուտան միայն։

Քաղաքէն Այնթապի կողմերը երթեւեկը արգիլուած է։ Թշուառութիւնն ու անօթութիւնը ծայր աստիճան իրենց աւերին մէջ են։

⁂

Շաբաթէ մը ի վեր զրոյց կը շրջէր քաղաքիս մէջ թէ Զէյթունցիները ալ չկարենալով տոկալ այն անտանելի կեանքին որուն ենթարկուած են մօտ երկու տարիէ ի վեր, որոշած են իրենց տունն ու տեղը ձգել և անցնիլ Դաշտային Կիլիկիա, ֆրանսգրաւման գօտին։ Այս որոշումը աւելի վճռականութեամբ տուած են, երբ Թրքական իշխանութիւնները պահանջած են Զէյթունի զինաթափութիւնը։ 270 հոգիի չափ ծեր, մանուկ ու անկարներ քաղաք ձգելէ յետոյ, մօտ 1300 հոգի ճամբայ կելլեն կռուով նահանջելու համար մինչև Օսմանիէ։ Քանի մը օր առաջ լուր ստացած էինք որ, անոնք հասած էին մինչև Անտըրըն. և հոն կռիւ բռնուած. սակայն յարգելի նկատումներով այս լուրին արձագանգ չէինք եղած։

Երէկ (յուլիս 13) իրիկուն Օսմանիէի Ազգ. իշխանութենէն առնուած նամակ մը և տեղս հասած Զէյթունցի մը պարզեցին դառն իրականութիւնը։ Նահանջող խումբը որուն 4-500ը կռուողներ են եղած, հասեր են մինչև Ճիհանի եզերքը, կռուելով այն գիւղերուն դէմ որոնք կարգիլէին իրենց նահանջը. սակայն Ճիհանի այս եզերքը թոյլ չեն տըւած գետը անցնելու։ Յուսահատական կռիւ մղուած է մինչև վերջին փամփուշտը, ուրկէ յետոյ խումբը ցրուած է զանազան ուղղութեամբ, անզէն ու անպաշտպան։ Քանի մը խլեակներ միայն կրցած են հասնիլ Օսմանիէ, և հաւանական է որ ուրիշ փախստականներ ևս հասնին։

Ցրուած տեղեկութեան համաձայն, խումբին հրամանատարը իր ամբողջ փամփուշտը սպառելէ յետոյ, փամփուշտ փնտռած է, որպէսզի անձնասպան ըլլայ, սակայն չկարենալ գտնելուն ինքզինքը գետը նետած է։

Այսպէս վերջ գտաւ Զէյթունը։

(Կիլիկիա)

— Ֆրանսական կառավարութիւնը առաջիկայ դպրոցական տարեշրջանին 60ի չափ դպրոց պիտի բանայ եղեր Ադանաի, Տարսոնի և Մերսինի շրջանակին մէջ։ Ատոնց ծախքերը ինք պիտի հոգայ։ Կըսուի նաև թէ տարեկան նպաստներ պիտի յատկացնէ տեղացի ժողովուրդներու վարժարաններին, ֆրանսերէն լեզուի ուսման ոյժ տալու նպատակով։

— Տ. Միհրան Տամատեան յուլիս 18ին մեկնած է Կիլիկիաէն։

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ 70ԱՄԵԱԿԸ

Ասկէ առաջ հրատարակած էինք թէ Կ.պոլսի Հայերի Համազգային ժողովը որոշած էր հանդիսաւորապէս տօնել Տիար Պօղոս Նուպար փաշայի ծննդեան 70ամեակը օգոստոս 4ին եւ ատոր համար յատկապէս յանձնաժողով մը կազմած էր։ Հ. Բ. Ը. Միութիւնն ալ այդպիսի որոշում մը տուած եւ հաղորդած էր Ն. Վ. Պօղոս Նուպար փաշային որ սակայն պատասխանած էր թէ ինք կը փափաքի որ ազգին ներկայ տագնապալի վիճակին եւ անորոշ կացութեան մէջ այդպիսի հանդիսաւորութիւններ չկատարուին, ապագայի յաւագոյն ուրախութիւն օրերին թողլով այդպիսի հանդիսակատարութիւններն ու խրախճանքը։

Հետեւապէս վերոյիշեալ յանձնախումբը նկատի առնելով Պօղոս փաշայի յայտնած բաղձանքը, որոշեր է դադրեցնել հանդիսակատարութեան համար սկսած աշխատանքը եւ Համազգային ժողովն ալ օգոստոս 4ի հինգշաբթի օրը հեռագրով մը պիտի շնորհաւորէ Պօղոս փաշային իբրեւ լը ներկայացուցչի։

ՆԱՄԱԿ ՓՈՔՐ-ԱՍԻԱՅԷՆ

Պրուսա, 23 յուլիս 1921

Ահաւասիկ այս անգամ փլչեցաւ Քէմալականներու կառուցած սպանիական գղեակը։ Յոյն զինուորի յաղթանակին վրայ մեր դրած յոյսը իրականացաւ։ Յոյները յուլիս 21ին մտան Էսկի Շէհիր, իրար ետեւէ Քիւթահիան և Աֆիոն Գարահիսարն ալ առնելէ վերջ. 10 հազարներով գերիներ և 100ներով թնդանօթներ ձեռք ձգած է յոյն բանակը և թըշնամին ուղտի քայլերով կը փախչի, որչափ կարող է, այնչափ շուտ։

Ին-Էօնիի յաղթանակը շլացուցած էր քէմալիստները. մինչև իսկ Կ.պոլիսը չծածկեց Անկորայի հետ իր ունեցած կապը և վերջապէս պատռեցաւ Կ.պոլսի քօղը, քանզի յուսով էին որ այս անգամ ալ պիտի յաղթէին Յոյներուն. այնչափ յուսով որ երբ Քիւթահիոյ և Աֆիոն Գարահիսարի անկումը կը լսէինք մենք պաշտօնական աղբիւրներէ, միևնոյն ատեն Պոլսոյ թուրք թերթերը կաւետէին Պրուսայի պաշարումը քէմալական ուժերէ...։

Պրուսայի ամբողջ քրիստոնեայ ժողովուրդները սաստիկ ուրախութեան մէջ են երէկուընէ ի վեր, բարբարոս Թիւրքերու յաղթուելուն համար։ Կը յիշէք անշուշտ 1918ի զինադադարի առաջին գիշերը Մարսիլիոյ ժողովրդի ցնծութեան տօնը. գրեթէ միևնոյնը երևակայեցէք Էսկի Շէհիրի յաղթութեան օրուան համար. հազարներով գաղթականներ յունական և հայկական դրօշ ի ձեռին փողոցները կը խայտային, թնդանօթները յաղթութիւն կաւետէին, իսկ եկեղեցիներուն կոչնակներն ալ զարնուեցան ամբողջ օրը։

Հայ և յոյն եկեղեցիներուն մէջ բանախօսութիւններ և քարոզներ, փողոցներուն մէջ ճառեր և կեցցէներ, մէկ խօսքով՝ յաղթութիւնը փառաւորապէս տօնուեցաւ հոս։ Թէ Թուրքիոյ յաղթուիլը ի՛նչ մեծ օգուտներ կրնայ տալ աշխարհի խաղաղութեան հաշւոյն, այդ չենք գիտեր. բայց սա միայն որոշ է որ յոյն կառավարութիւնը պատերազմէն հետևելիք պատասխանատուութիւնը յանձն առնելէ վերջ, ալ չենք կարծեր որ Պրուսան և իր շրջակայքը պարպէ առանց իրեն կցելու։ Անշուշտ Իզմիրն ու Թրակիան այլևս մաս կը կազմեն Յունաստանի։

Ի հարկէ նորէն պիտի բոլորուին չորսերը կանաչ սեղանի շուրջ, վերջնականապէս Թուրքիոյ բաղդը տնօրինելու համար և այս անգամ չի կարծուիր որ յոխորտացող Թուրքիոյ բարեխօս չահամոլներ գտնուին. . հետևապէս թող աչքը բաց գտնուին մեր դիւանագէտ... իշխանութիւնները։ Եթէ այս անգամ ալ չգիտնանք առիթէն օգտուիլ, ա՛լ յետոյ Ալէլուիա...։

Էսկի Շէհիրէն հիմայ եկող հայ տղայ մը կայ· քաղաքը հանդարտ է եղեր. իսլամ բնակչութեան կէսը գաղթած է. իսկ հայ ընտանիքները կը մնան։

Ց. ՀՐՅԱՆ

ՄԻ ՔԱՆԻ ԱՄԻՍ ՎԵՆՆԱՅՈՒՄ

(Թռուցիկ Նօթեր)

II

Սիրելի Արտաշէս,

Բոլոր հասարակութիւնների մէջ դեռ անյիշատակ ժամանակներից ի վեր՝ մենք տեսնում ենք դասակարգային բաժանումներ — իշխողներ եւ հպատակներ, կեղեքողներ եւ կեղեքւողներ, հարուստներ եւ աղքատներ։

Եթէ վերցնելու լինենք վերջին երկու դասակարգերը, պիտի տեսնենք որ նրանք Աւստրիայում, նա մանաւանդ մայրաքաղաքում, աւելի են աչքի ընկնում։

Մինչ հազարաւոր մարդիկ ամենադաժան, ամենավատ պայմանների մէջ օրեր են անցկացնում, զրկւած ամեն վայելքից, ամեն հաճոյքից եւ վերջապէս երբ նրանք օրն ի բուն փողոցներ են շուռ գալիս ծխախոտի ծայրերը հաւաքելու, նեխած ու փտած մրգեր վերցնելու, անդին մի քանի քայլ հեռու ապրում է մի ուրիշ դասակարգ՝ ճոխ ու փարթամ, վայելելով կեանքի ամէն քաղցրութիւն։

Անծանօթ կեանքի ցաւերին, եւ անտարբեր իրենց քաղցած ու սոված եղբայրներին, նրանք, այդ յղփացած մարդիկ, փառաւոր ապարանքներում, սրճարաններում եւ թատրոններում, անմըռմուռ, անհոգ իրենց հաճոյքին են նայում։

Մտնենք միայն քաղաքային պարտէզը՝ ի՞նչ ես տեսնում։ Բազմաթիւ կանայք եւ տղամարդիկ, հագուած ամենավերջին նորաձեւութիւնով, օծւած բազմաթիւ իւղերով եւ ներկերով, նստած են փափուկ բազկաթոռների մէջ եւ հազարներ ծախսում մի ընթրիքի կամ մի խմիչքի համար։

Յաճախ տեսել եմ թէ ինչպէս ոտաբոբիկներ, անդամալոյծներ, փոքրիկ աղջիկներ եւ ծերունիներ մօտենում են նրանց մի բան խնդրելու, մի կտոր սեւ հացի փող, սակայն կոպտօրէն մերժւում են եւ դողդողալով հեռանում։

Առաջինները շարունակում են հրճուել, բաժակներ կոնծել, իսկ երկրորդները նայում են, տեսնում են այդ ամենը, բայց լռում, համակերպւելով իրենց վիճակի հետ։

Կեանքը ժպտում է, բայց ոչ բոլորին։

Կգայ մի օր սակայն, սիրելի Արտաշէս, երբ բոլորը պիտի ապրեն համահաւասար իրաւունքներով, իրենց քրտինքի հալալ աշխատանքով։

Իսկ մինչ այդ աշխատինք։

Ռ. ԹԷՐԼԷՄԷԶԵԱՆ

(Շար.)

Վիեննա
յուլիս 1921

ՅՈՒՆԱԹԻՒՐՔ ԿՌԻՒԸ

Տօրիլէի (Թիւրքերէն Էսկիշէհիր) կռիւը փայլուն և մեծ յաղթանակ մը եղաւ Յոյներին համար։ Ամբողջ օրը շարունակեցին հալածել Թիւրքերին, մինչև Տօրիլէէ արևելակողմէն 45 հազարամէտր անդին։

Գերի ինկած թիւրք բարձրագոյն սպայներին վրայ թուղթեր գտնուեցան որոնք կը հաստատեն թէ թըշնամին իր գրեթէ բոլոր ուժերը կեդրոնացնելով սկսած էր յարձակումը, Տօրիլէն վերագրաւելու մտադրութեամբ։

Թիւրքերը կը նահանջեն դէպի Սիվրիհիսար։

Քէմալականների տարածած լուրերին հակառակ, իրազեկ աղբիւրներէ տեղեկութիւն կը տրուի որ յոյն զօրքերը կը գտնուին Էսկիշէհիրէն և Քէօթահիաէն անդին և իրենց հաղորդակցութեան գիծեր ապահովուած են։ Հարաւային մասին մէջ, Յոյները հաստատ կերպով բռնած են Աֆիոն-Գարահիսարը. Գօնեաի երկաթուղիին վրայ իրենց յառաջացած լինելուն շնորհով։

— Աթէնքէն կը հաղորդեն թէ Կոստանդին թագաւորը Քէօթահիա հասեր է։

— Կ.պոլսէն կը հաղորդեն յուլիս 26ին թէ քէմալական կառավարութիւնը Յոյների յառաջանալուն հետեւանքով պարտաւորուեր է իր կեդրոնավայրն ու Ազգային Ժողովը Էնկիւրիէն Սիւազ փոխադրել։

— Նուրէտտին փաշան քէմալական զօրքերի ընդհանուր հրամանատար նշանակուած է փոխանակ Իսմէթ փաշայի որ վիրաւորուած է։

— Կոստանդին թագաւորը և Նիքոլա իշխանը յուլիս 30ին փառաւորապէս մտան Լուքիչէնիր ուր ընդունուեցան սպարապետ Փափուլաչէն։ Քաղաքին Թիւրք քաղաքապետը արծաթէ ափսէով մը աղ և հաց ներկայացուց իրենց, իբր խորհրդանշանը հաւատարիմ հպատակութեան։ Յունական մայր-եկեղեցիին մէջ գոհաբանական մաղթանք կատարուեցաւ։

— Կը հաստատուի որ Յոյները զօրք իջեցուցած են Սև ծովի եզերքը, Ինէպոլի և Սինոպ։ Ինէպոլի իջած զօրքերը գրաւեցին Փաշանտրան և սկսան յառաջանալ, Աստաֆազարի ուղղութեան մէջ ընդհարումէ մը յետոյ։ Այդ ուղղութեամբ կը յառաջանայ նաև զօրասիւն մը որ Պիլէճիկէն ճանբայ ելած է։

Սև ծովի եզերքին պաշարումը բարոյալքած է Թիւրքերը։ Յունական նաւեր Սամսոնի Թնդանօթների պաշտպանութեան տակ այցելեցին Թիւրքական նաւերը և նոյն իսկ ծովային զօրք իջեցուցին Օրտու, առանց զէնք պարպուելու իրենց վրայ Թիւրքերի կողմէն։

— Լուքիչէնիրէն Էնկիւրի տանող ճանապարհին վրայ Թիւրքերի նահանջը կը շարունակուի։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՃԱՌ
ՄԵՍՐՈՎԲԱՅ Յ. ՍԵԹԵԱՆՑ

Նոր-Ջուղայեցւոյ՝
Ասացեալ ի Հանդիսի
«Հարիւրամեայ Յոբելենի»
Հայկական Մարդասիրական Ճեմարանի
Որ ի Կալկաթա Հնդկաց՝
Յերկրորդում աւուր Ապրիլի
1921 ամի՝ յաւուր Շաբաթու,
Յերեկոյեան յինն ժամուն։

Սրբակրօն Հարք, պատուական եւ արժանագով Նախագահ, պատուելուհի Տիկնայք, Յարգելի եւ բարեւեկ հիւրք եւ հանդիսականք եւ յա՛ւ սանունք եւ նախկին ուսանողք Հայկեան Մարդասիրական Ճեմարանիս:

Հարիւրամեայ ցանկալի, պանծալի, սիրալի և յաւէտ յիշատակելի «Յոբելեանն» է այսօր պատկառելի և յաւէտ արգիւնաշատ ազգային կրթական Հաստատութեանս զի ՀԱՐԻՒՐ *ամօք յառաջ, ի սմին իսկ աւուր՝ որ էր առաջին օր «Շամս» ամսոյ՝ ուստի և Նոր Տարի ըստ Աչքբէայի կամ փոքր Թուականի մերոյ Նոր-Ջուղայի՝ բացաւ ի մէջ մեծի խանդավառութեան Հայկազանցն քաղաքիս մեծի՝* Մարդասիրական *մեր այս* Ճեմարան Հայկեան՝ *յերկրորդում աւուր ապրիլի,* 1821 *ամի կենարարին. ուստի* երկրորդ *հնագոյն դըպրոցն է ի Մայրաքաղաքիս, դրացին մեր* Free School *գոլով հնագոյնն ի Կալկաթա։ Բացումն ճեմարանիս եղև ի Թիւ* 358 *Հին Չայնա Բազար փողոցի։*

Արդ յառաջ քան զբացումն Մարդասիրական Ճեմարանիս, Եւդոկիայցի՝ այն է Թօխաթցի ամն՝ Յարութիւն Գալուստեան որ աստանդական եկեալ ի Հայաստանէ հասեալ էր աստ և ուսեալ դանգլիական լեզուն ի Free School *դպրոցին և զհայերէնն յԱղայ Էմինէ, բացեալ էր ի տան իւրում յԱմրատօլա փողոցին՝ առ երի եկեղեցւոյն Յոնաց՝ վարժարան մի յամին* 1798 *վասն հայ և անգղիացի ուսմանց ուր ուսանէին հայ պատանիք բնակեալք ի քաղաքիս. այլ սոյն առանձին դպրոց Յարութիւնի Գալուստեան՝ յետոյ, այն է յամին* 1825, *միացաւ ընդ Ճեմարանիս ըստ բաղձանաց և յատուկ խնդրանաց Հայ Հասարակութեան քաղաքիս և Յարութիւն Գալուստեան եղև ուսուցչապետ Ճեմարանի ցվախճան կենացն։ Հանգեաւ ի Տէր բազմարդիւն վարժապետն մեր Յարութիւն Գալուստեան յամին* 1833, *ի* 11 *Նոյեմբերին, ի հասակի* 56 *ամաց և Թաղեցաւ ի սրահի Նազարեթայ սուրբ եկեղեցւոյն մերոյ աստ, կտակաւ թողեալ եկեղեցւոյն մերոյ սրբոյ զգումարն տասն հազար ռուփեաց վասն աղքատաց որպէս յիշատակեալ տեսանի ի սեաւ մարմարինեայ արձանագրութեանն որ զետեղեալ կայ ի զանգատան եկեղեցւոյն մերոյ յաջմէ Յարութեան դրան։*

Ի միջի յառաջադէմ աշակերտացն բարեյիշատակ Յարութիւնի Գալուստեան՝ էր Յովհաննէս Ավդալեան Շիրազեցին *որ զամս իբր* 50 *վարեաց զպաշտօն հայ ուսուցչապետի և Տեսչի ի Ճեմարանիս և հանգեաւ լի արդեամբք և վաստակօք ի* 11 *Յուլիսի* 1870 *ամի ի հասակի* 67 *ամաց և շիրիմ նորա կայ ի սրահի Նազարեթայ սուրբ եկեղեցւոյն մերոյ աստ։*

Որպէս մի ի յետին աշակերտացն Ճեմարանիս, բա՛ղձ լինի ինձ և պատիւ իսկ առաջարկել ի Տօնիս մեծի գրաժականաց անմա՛հ Հիմնադրացն ճեմարանիս, տալով ի նմին ժամու և համառօտ պատմութիւն Հիմնադրութեան Հարիւրամեայ Հաստատութեանս. զի թէպէտև ի բազմաց հետէ իղձ լինէր ինձ գրել և հրատարակել զամբողջական պատմութիւն Մարդասիրական Ճեմարանիս, ի յաւերժական յիշատակ սոյն Հարիւրամեայ Յոբելինիս, այլ սակայն յերեսաց բազմակողմանի ոգեմաշ զբաղմանց և յաւէտ ի պատճառս տկարութեան վաստակաբեկ անձինս ի հերուն հետէ՝ չկարացի ի ցաւ սրտիս և հակառակ սրտագին բաղձանացս ի կատար հասուցանել զգործն զայն, այլ վասն հաւաքեալ և փնջեալ եմ նիւթս բազումս յերեսուն ամաց հետէ յորժամ տակաւին ուսանող էի ի ճեմարանիս։ Եթէ սակայն կամք իցեն երկնից և ինձ եւս կեանք, ունիմ ի լոյս ընծայել զայն յընթացս ներկայ տարւոյ՝ լիալի ծանօթութեամբք և յիշատակարանօք որպէս կոթող անմոռաց յիշատակի Հարիւրամեայ գործունէութեան, արդեանց և վաստակոց ազգային տանս, միակն արդարև յիւրում տեսակի ի համօրէն Հնդկաստան որ զդար մի ամբողջ ընկալեալ է ընդ հիւրասէր յարկաւ իւրով բազում Հայ մանկունս և արարեալ զնոսա պիտանիս եւ պատուաւոր անդամս հայ հասարակութեան մերոյ ի սփիւռս Հնդկաց աշխարհի։

Այլ ի պատմութիւն հիմնադրութեան Ճեմարանիս յորմէ զարտուղի անկայ։

Արդէն յայտ է Ձեզ ամենեցուն թէ որպիսի իմն եռանդեամբ և հեռատեսութեամբ յղացաւ ազգասէր և անմա՛հ հիմնադիրն մեր Աստուածատուր Մուրադխան *զգաղափար ազգային կրթական հաստատութեան ի մեծի մայրաքաղաքիս Հնդկաց՝ ըստ որում քաղաք հայաշատ՝ և յոյժ հեռաքրքրական է տեսանել զտրամադրութիւն կտակի նորին յորում բանք լի են զհիմնադրութենէ ազգային կրթական վարժարանիս. ուստի վասնզի, բարեհաճ հաւանութեամբ Ձերով ընթեռնուլ միայն զայն մասն կտակի Աստուածատուրայ Մուրադխանի որով ի գոյութիւն եկն Մարդասիրական մեր այս Ճեմարան, ուր մեք ամենեքին զնուընդն բարին սնաք ըստ չափու կարողութեանց և ունակութեանց մերոց։*

Ահաւասիկ ծնունդ և հիմն բազմարդիւն Ճեմարանիս և ոգի գրութեան բարերարին մերոյ անմահի։

Թողում Կալկաթու Հայոց ազգի դըպրատանն վասն ազգի մանկանց ուսումն՝ ութն հազար ռուփի սքայ, Թէեւ չափիցն առաւել տխուր ամ որ ներկայ մեր ողորմելի տառապեալ վտարանդի ազգն զուրկ այ էսպէս առաջիկայ պիտանի մանիցն՝ որ չունիմք, եւ ոչ գոյ ազգի միջում էսպէս մին հարկաւոր եւ բուն պիտանի ինչ, որ բազմութիւն մեր ազգիցն կամք բնակեալ բոլորքս է| Աստուծոյ ողորմութեամբն մանկանց տէր եւ զուրկ ամք մնացել։ Եւս ներկայ զուրկ ամք էսպէս մին առաջիկայ հարկաւոր եւ պիտանի դպրատանիցն, որ չունեմք բարի եւ ճարտար եւ հաւատարիմ ուսուցիչք որ մեր քան զմեզ տառապեալ մանկանցն բարի ուսում տայ։

(Շարունակելի)

ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Տքթ. Մ. Սալբի. ՄԵՐ ԽԱՉԸ. Գիրք Ա. Գին 10ֆր.. Տպագրութիւն «Վերածնունդ»ի Բարիզ. 1921. Պատկերազարդուած Երուանդ Տէմիրճեանէ. կողքը՝ Ռ. Շիշմանեանէ։

(Թիւրքական վայրագութիւնը ոչ միայն փորձեց փճացնել հայ ժողովուրդը, այլ և փորձեց արմատախիլ ընել անոր ծաղիկը, հայ միտքը։ Շատ քիչեր կրցան վերապրիլ և այդ քիչերէն հազուագիւտ գտնուեցան այնպիսիներ որոնք կարենային հոգեբանօրէն պատկերացնել հայ ժողովրդի կրած ահաւոր մարտիրոսագրութիւնը և այդ տառապանքի մէջ անոր ցոյց տուած կորովն ու գեղեցիկ յատկութիւնները։ Այդ հազուագիւտներէն է և Տքդ. Մ. Սալբի, երիտասարդ ու տաղանդաւոր գրագէտ բժիշկը, որ Թիւրքական բանակին մէջ ծառայելով և ստոյգ մահէ բազմիցս ազատելով ականատես եղած է իր հայրենակիցների չարչարանքներին։ Իր կրած տպաւորութիւններէ ներշնչուած վիպակների հաւաքածոյ մըն է այս հատորը շատ գեղեցիկ տպագրութեամբ, գրուած կուռ, պատկերալից ոճով։ Արժէ կարդալ այս հատորը գրական ու պատմական գեղեցիկ վայելք մը չզրկուելու համար։ Ստանալու համար դիմել «Վերածնունդ»ին (16, Bd. St. Denis. Paris).

Կարելի է ստանալ նաև Արմէնիայի դրասենեակէն Մարսէյլի մէջ հատը 10 *ֆր.ով, իսկ Մարսէյլէն դուրս* 11 *ֆր.ով։)*

⁂

ՕՐԷՆՔ. Պարբերաթերթ Հայ Իրաւագիտաց Միութեան. Ա. տարի, Թիւ 2. 1921 Յունիս։

Բովանդակութիւն.— *Լեզուի անկախութիւն.— Նախագիծ հայ ամուսնական դատավարութեան օրէնքի.— Նիւթեր պատմութեան համար.— Հողային օրէնքը և իր յեղաշրջումը.— Հայկ. ամուսնական օրէնքի շուրջ.— Թիւրքիա և իր օրէնքները.— Նմուշներ խորհրդային Հայաստանի օրէնսդրութենէն.— Հայկ. հարցը Պերլինի դատարանին առջև.— Միութեան կեանքէն։*

Խմբագրութեան վերաբերեալ ամէն գրութիւն ուղղել Տ. Լութֆիկ Գույումճեանի Կ.պօլիս, Ղալաթիա, Արսլան խան, Գ. յարկ։ Հատը ձեռքէ կը ծախուի 15 ղրուշի։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ՀԱՅ ՄԵԾ ՆՊԱՐԱՎԱՃԱՌ

ԳԱԼՈՒՍՏԵԱՆ եւ ԿԷՄԱԼՄԱՋԵԱՆ
«AU VRAI MELANGE»
50, Rue de la République.— Marseille

Ամէն կարգի նպարեղէններու ճոխ տեսակներ. հում, խարկուած ֆրանսական եւ հայկական քաշուած սուրճեր. ոգելից ըմպելիներու ընտիր տեսակներ. գներու անմրցելի աժանութիւն։ Անգամ մը փորձելը բաւարար է համոզուելու համար։

Վաճառատունը կընդունի ապսպրանքներ Ֆրանսայի ամէն քաղաքներէն։

ՊՕՂՈՍ ՀԱՊՕՑԵԱՆԻ

ԿՕՇԻԿԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ
10, Place des Grands Carmes. Marseille
Կը պատրաստէ

Արանց եւ կանանց համար ամէն տեսակ նուրբ, դիմացկուն ու ճաշակաւոր կօշիկներ թէ պատրաստ եւ թէ չափի վրայ, չափաւոր գիներով։ Ուրիշ տեղ դիմելէ առաջ հեղ մը փորձեցէք հայ կօշկակարին մօտ եւ պիտի համոզուիք։ Կը հայթայթէ մեծաքանակ թէ փոքրաքանակ։

Գործարանը կը փնտռէ հայ կարող գործաւորներ։

ՆԵՐՍԷՍ ՂԱԶԻԿԵԱՆ

Գրավաճառ եւ լրագրավաճառ
Փափաքողներուն ձրի կը ղրկուին գրացուցակներ։ Դիմել
Nersès Ghazikian
Alexandrie (Egypte)

ԱՐԱՐԱ

Կիսամսեայ հանդէս
Պաշտօնաթերթ Հայ
Լէգէոնականներու Միութեան

Սուրի եւ գրիչի գործածութեան մէջ եղբայրացած հայ լէգէոնականները միանալով կը հրատարակեն *Արարա* թերթը որ այս տարիի սկիզբէն հանդէսի մը վերածուած է։ Կը պարունակէ կարող գրիչներէ գրական եւ գեղագիտական գրուածներ, կլիլիկեան լուրեր եւ այլն։ Ոչ մէկ կուսակցութեան կը պատկանի. լէգէոնականների թերթն է։

Տարեկան բաժնորդագինն է 65 ֆրանք (Ամերիկա 8 տլր.), վեցամսեայն 35 ֆր. (4 տլր.)։ Հասցէն «Arara», revue semi-mensuelle. B. P. 169. Adana (Cilicie).

P. S. Eremian. — Nos Morts. 1917. *(Հայաստանի մարտիրոսութեան նկատմամբ Հ. Ս. Երեմեանի ֆրանսերէն բանաստեղծական մէկ գրուածքն է որ շատ մը թերթերի և գրագէտներու կողմէն ներբողներով յիշատակութեան արժանացած է։) Գին* 0,50 *սնդ.* (0,60)։

Լոյս տեսաւ Հայաստանի քարտէզը գունաւոր և հայատառ, պատրաստուած Մ. Զամիչեանէ։ Մեծութիւնն է 65×48։ *Կարելի է ստանալ* Արմէնիայի *դրասենեակէն։ Գին Մարսէյլի մէջ* 2 *Ֆր. Մարսէյլէն դուրս* 2,50։

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
ՄԱՐՍԷՅԼ

Հայերէն Տպարան Մ. Փօրթուգալեանի
Le Gérant : François CARRIERE.
Marseille. — Imprimerie du Midi